ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Փետրվարի 9-ին, 74 տարեկան հասակում, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց սովետահայ ականավոր աշխարհագրագետ Հովհաննես Սարգսի Ստեփանյանը։ Մեզանից հեռացավ վառ հայրենասերը և հայ մշակույթի անխոնջ աշխատավորը, որի ողջ գիտակցական կյանքը նվիրված է եղել ժողովրդին ծառայելուն։

Հովհաննես Ստեփանյանը ծնվել է 1888 թ. Բաքվում, ծառայողի ընտանիքում։ Նրա ծնողները ծագումով գյուղացի էին, նախկին Երևանյան նահանգի Ագուլիս գյուղից, որտեղ հաճախակի հյուր էր լինում պատանի Հովհաննեսը։ Հայրենի բնաշխարհի՝ հնամենի Գողթան գավառի շունչը հոգում, ուսման անհագուրդ տենչով բռնկված նա հաստատ մտադրվում է իր ուժերը նվիրել երկրի աշխարհագրական ուսումնասիրություններին։ 1908 թվին ավարտելով Թիֆլիսի արական գիմնազիան, նա ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը և ունկնդրում է աշխարհագրության հարցերի շուրջը կարդացվող դասախոսություններին։ Այն ժամանակ Ռուսաստանում աշխարհագրական ֆակուլտետներ դեռևս չկային. մասնագիտական կրթության պակասը հարկ է լինում լրացնել ինքնուրույնաբար։ Համալսարանն ավարտելուց հետո 1915 թվից Հ. Ստեփանյանն անցնում է մանկավարժական աշխատանքի, դասավանդելով պատմություն և աշխարհագրություն էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Գայանյան ուսումնարանում, Երևանի գիմնազիաներում։ Առավել բազմակողմանի է դառնում նրա գործունեությունը Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Մանկավարժական նորաստեղծ Բանֆակում, Լենինականի ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտում, Երևանի Պետական համալսարանում դասախոսություններ կարդալուց բացի Հ. Ստեփանյանը եռանդուն կերպով աշխարհագրական գիտելիքներ է տարածում աշխատավորական կոլեկտիվներում, Կարմիր բանակի



զորամասերում, պիոներների և դպրոցականների պալատում և այլն։ Հարուստ գիտելիքների, հյութեղ ու գրավիչ լեզվի շնորհիվ նրա դասախոսություններն ու զրույցները լսվում էին մեծ ուշադրությամբ։

Մեծ էր Հ. Ստեփանյանի գիտական նախաձիրությունների շրջանակը։ Նա զբաղվում էր աշխարհագրության պատմության և պատմական աշխարհագրության, քարտեզագրության և ֆիզիկա-աշխարհագրական շրջանացման հարցերով։ Նա Հայկական աշխարհագրական ընկերության հիմնադիրներից մեկն էր և նրա գիտական քարտուղարը 25 տարի շարունակ։ Նա աշխատել է իբրև ՀՍՍՌ Լուսժողկոմատի աշխարհագրության հանձնաժողովի նախագահ, ակտիվորեն մասնակցել է ՀՍՍՌ Գերագույն Սովետի տրանսկրիպցիոն հանձնաժողովի գործունեությանը, հրատարակել է ռեսպուբլիկայի աշխարհագրական անունների վերաբերյալ տեղեկատու ձեռնարկ, մի շարք բրոշյուրներ, բազմաթիվ հոդվածներ և քարտեզներ։ Նրա թարգմանությամբ և խմբագրությամբ լույս են տեսել Սովետական Միության ականավոր աշխարհագրագետների կազմած բուհական և դպրոցական շատ դասագրքեր, ինչպես նաև Վ. Ի. Լենինի մի շարք աշխատություններ. նա աշխատակցել է զանազան ամսագրերի և կոլեկտիվ գիտական հրատարակությունների։ Հ. Ստեփանյանի գրչին է պատկանում նաև «Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում» աշխատությունը, որը հեղինակի երկարամյա հետազոտությունների արդյունքն է և եզակի տեղ է գրավում մեր աշխարհագրական գրականության մեջ։ Նրա ամենախոշոր գործը, սակայն, ռուսերեն լեզվով գրված «Հայկական ՍՍՌ ֆիզիկա-աշխարհագրական շրջանացումն է»՝ հայրենի երկրի բնության անձնական ուսումնասիրությունների և գոյություն ունեցող գրական տվյալների քննադատական վերլուծության և ընդհանրացման արդասիքը, որը ցավոք սրտի մինչև այժմ լույս չի ընծայված և անծանոթ է մասնագետների լայն շրջաններին։

Թե՛ իր հասարակական աշխատանքներում և թե՛ գիտա-մանկավարժական գործունեության մեջ Հովհաննես Ստեփանյանը ցուցաբերել է նվիրվածություն ու եռանդ և վայելել է շրջապատի սերն ու հարգանքը։

Նրա հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում։